

Հ. Հ.Ի քաղաքացի հրեաները ո՞ր էն, ի՞նչ կ'ընեն...

Posted on October 12, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ. Գեորգ Եագրճեան, Երեւան, 13 Հոկտեմբեր 2020

Թուրքիա-Ատրպեյճան- Իսրայել-ահաբեկիչ վարձկաններ եւ այլք (Փաքիստան, Աֆղանիստան...) դաշինքին դեմ հայ ազգի գոյամարտը Արցախեան (եւ ոչ միայն) ճակատներուն վրայ արդէն մտաւ իր երրորդ շաբաթը: Հ. Հ.ի ազգային ու կրօնական փոքրամասնութիւններէն եզիտիները, քիւրտերն ու ասորիները յստակօրէն յայտարարեցին իրենց դիրքորոշումը՝ զիրենք հիւրընկալած ու քաղաքացիական բոլոր իրաւունքները շնորհած պետութեան նկատմամբ: Եզիտիները նոյնիսկ առանձին կամաւորական ջոկատով կը մասնակցին գոյամարտին, քիւրտերը վերջին օրերուն արդէն տուին նահատակ մը՝ ռազմաճակատ կամաւոր մեկնած ոստիկան մը: Եզիտիներն ու քիւրտերը Արցախեան ազատամարտին տասնեակներով նահատակ տուած են առ այսօր: Փոքրամասնութիւններուն մէջէն միայն հրեաներն են, որ քար լռութիւն կը պահեն: Հրեաներուն եւ Իսրայելին վերաբերող ամեն աննշան հարցի վերաբերեալ հանդէս եկող տիկին Ռիմա Վարժապետեան-Ֆելլերը՝ «Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպութեան ղեկավարը շոգիացած է մէջտեղէն: Կը յուսանք, թէ պսակածել ժահրի համավարակը չէ անոր անհետացման/մեկուսացման պատճառը...

Իսկ ահա, թէ ինչ կը կարդանք ատրպեյճանական oxu.az ռուսալեզու կայքի 8 Հոկտեմբերի լուրերուն մէջ՝ «[Ատրպեյճանի մէջ ապրող աշքենազի հրեաները կ'աղօթեն յաղթանակի համար](#)» վերնագիրին տակ:

«Ատրպեյճանի մէջ ապրող աշքենազի հրեաները այսօր (ընդգծումը ինձմէ է, պատճառը կը հասկնաք ամենէն վերջը - **Գ. Ե.**) հաւաքուեցան Պաքուի սինակոկին մէջ եւ աղօթք մատուցեցին Ատրպեյճանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը ապահովելու պայքարը շարունակող մեր քաջարի բանակի յաղթանակին համար:»

«Մեր հայրենակից հրեաները Աստուծմէ մեծ յարգանքով ու անկեղծութեամբ խնդրեցին պատերազմի շուտափոյթ դադրեցումը, մեր հողերուն ազատագրութիւնը, մեր զինուորներուն ողջ-ամողջ տուն վերադարձը, Ատրպեյճանի տարածքային ամբողջականութեան լիարժէք ապահովումը, եւ ցանկացան խաղաղութեան հաստատում մեր երկրին եւ ամբողջ աշխարհին մէջ:»

Աղօթքի արարողութեան ժամանակ ելոյթ ունենալով, Ատրպեյճանի աշքենազիներու գլխաւոր ռապպի Շնէոր Սեկալը նշեց, որ մեր երկրի հրեական համայնքը միշտ զօրակցած է ատրպեյճանցի ժողովուրդին:

«Մենք շատ կը սիրենք մեր հայրենիքը՝ Ատրպեյճանը: Չայն պաշտպանելը մեզի համար մեծ պատիւ է: Մենք՝ տարբեր ազգութիւններու եւ կրօններու ներկայացուցիչներս, կրնանք հանգիստ կեանք վարել եւ մեր մշակոյթն ու կրօնը ներկայացնել :

Կ'աղօթենք Հայրենիքին համար մարտնչող իւրաքանչիւր զինուորի եւ ամբողջ բանակին

համար: Առանց մեծ կորուստներու յաղթանակ կը խնդրենք Աստուծմէ: Կը հաւատանք, որ յաջորդ արարողութիւնը պիտի կատարենք ուղղակի Շուշիի մէջ» (Բնագիրին մէջ՝ Շուշա Է. ընդգծումը ինձմէ Է - Գ. Ե.),- ըսաւ ան:

Յիշեցնեմ, որ Պաքուի մէջ հրեաներու այս ձեռնարկին օրը, թերեւս այլ նոյն ժամերուն, մեր սրբարանը՝ Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) հիասքանչ եկեղեցին քարուքանդ եղաւ ատրպէյճանական բանակի հարուածէն, շատ հաւանաբար հսրայելէն մատակարարուած անօդաչու թռչող սարքով կամ մէկ ուրիշ զէնքով:

Մեկնաբանութիւնները կը ձգեմ ընթերցողներուն:

Ռուսերէնէ թարգմանեց եւ Նիւթը հրապարակման պատրաստեց Գեորգ Եազըճեան

Յ. Գ. Նիւթը պատրաստ էր հրապարակման երբ Համացանցի ընկերէ մը ստացայ «Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպութեան 6 Հոկտեմբերի թուականը կրող յայտարարութիւնը՝ ուղղուած հսրայելի կառավարութեան՝ Ատրպէյճանի գիտումը դադրեցնելու կոչով: Մեր համոզմամբ, այսքանը շա՛տ քիչ Է... Տեսանիւթեր կան, ուր կը տեսնենք, որ Ատրպէյճանի հրեաներ կը կռուին ատրպէյճանական բանակ կչուող խաժամուժի շարքերուն մէջ: Առ այսօր չեմ լսած Հ. Հ.ի Չիհուած Ուժերուն կամ Արցախի Պաշտպանութեան Բանակին մէջ թշնամիին դէմ կռուող հրեայի մը, ուր մնաց հրեայ նահատակի մը մասին:

There are no comments yet.